

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՅԱՌՈՒՅԻՆ
ՄԱՌԿԻՄՈՒ



ՆԿԱՐՆԵՐԸ
ՄԲԱՂԴԱՍԿՐՅԱՆԻ

ԵՏՆՈՒՄ

1936

ՅԵՐԵՎԱՆ

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

Մ ՊՈՒՅՊՈՒՅ
Ս ՈՒԿԻԿԸ

ՊԵՏՂԱՏ 1936 ՅԵՌԵՎԱՆ





Suzanne

I

Մի լերկիր կա—Հնդրատան,
Մի մուկիկ կար ճրսճրատան
Հնդրատանի անտառում,
Կոկոս ծառի ծակուռում:

Ապրում եր նա իր համար
Բարիքներում անհամար,
Ու մի որ լավ, մի որ վատ
Ունեւր ապրուստ քիչ թե շատ:

Որը մի ճանճ, մի միջատ,
Մի ծեղ, արմատ, ցորնի հատ
Ուտում եր ու քեֆ անում,
Խաղում, պարում իր բնում:



Իր անուանը Պուլ-պուլ եր,
Ազգանունը Ճրատունի,
Հացը վայ-վայ — վոլ-վուլ եր,
Յերգը տատայ—նայ-նի-նի:

II

Եսպես մուկիկն ապրում եր
Վազվզելով վար ու վեր:
Ու մի որ ել ծանր ու մեծ
Իրան-իրան միտք արեց.

«Տունս կոկոս ծառի տակ—
Բերան չունեմ, թե՛ ճաշակ.
Ճանճ կերել եմ, ծեղ կերել,
Տեսնեմ կոկոսի համն ել»:



Ես ասեցն եր՝ մեկ ել դճմփ—
Ծառից կոկոսն ինչպեա բոմբ
Ընկավ նրա առաջին...
Կոկոս, կաղին չէ չնչին:

Կաղնի տեօակ, սեխի չափ,
Միջուկն անճշ, յուղալի,
Բայց կեղևն ե միայն հաստ,
Ահա ինչն ե ցավալի...

Ես քեզ կոկոս, ես ճարվեց.
Բայց ի՞նչ ոգուտ մուկիկին...
Ինքը պատիկ՝ իսկ նա մեծ...



Վրա ընկավ Մուկիկը.
Բացեց իր սուր ճանկիկը
Կծեց, կրծեց, կրծոտեց,
Բան դուրս չեկավ, չաջողվեց:

Ու կոկոսի չորս կողմը
Ման ե գալիս Պուչպուչը.
Կեղևն հաստ ե, վո՞նց անի...
Ու սկսեց վուչ-վուչը.


«Ախր ի՞նչ ե, ի՞նչ կըլի
Տեսնեմ դրա համն, ելի՛:
Մի քիչ կոկոս, մի քիչ ջուր,
Գոնե մի կո՛ւմ, մի պուճո՛ւր»:



Դու մի ասի, ընկնելուց
Ծակ եր բացվել կոկոսում.
Եդ վոր տեսավ, հիմի ել
Ծակից մտնել ե ուզում:

Բայց տեսեք ինչ պատահեց...
Ծակն ե պատիկ, ինքը մեծ.
Ծակիցը ներս չի մտնում,
Սովից ել ուշքն ե գնում:

Հաց ե լինում Մուկիկը,
Վոնց լաց չըլի Մուկիկը...
Սիրտն ուրիշ բան չի ուզում.
Նայում ե ու նվազում:



Եսպես լացեց, սուգ արեց,
Ենքան լացեց, սուգ արեց,
Հետն ել սովեց — լղարեց:

Վոր լղարեց — բարակեց,
Մեկ ել, ընը՝ ճանճի պես
Ծակից մտավ, գնաց ներս:

III

Ե՞ս ինչ եր, տո՛, վո՞նց լեղավ,
Ես ծակիցը վո՞նց ներս մտավ. —
վո՞նց, ա՛յ նայիր. — ես քեզ մո՛ւկը,
Ես կոկոսը, ես միջուկը:



Դե քեֆ արա, ոխանց, ոխանց,
Դե, պար արի — տարա, նանանց,
Դե, միջուկը կեր ու կրծի՛ր,
Կեր միջուկը, հյուսթը խմի՛ր:

Համ ուտում ե, համ ել պարում,
Համ պարում ե, համ ել յերգում. —
«Ինքս Պուլպոնց, պարս տուտոնց,
Ել ի՞նչ վայ վանց, ել ի՞նչ վուլց-վուլց»

Եսպես թոչում ծափ ե տալի
Պար ե գալիս ռանգի, լալլի,
Չան, գոռում ե, տարայ նի-նի,
Այ թե քեֆը ինչպես կը՛լնի:



IV

Ես վոր եսպես կերավ մաքրեց,
 Առաջ փոքր եր, հիմի տուգեց,
 Տուգեց, դառավ խոշոր մի մուկ,
 Ընկավ կողքին, քնեց խորունկ:

V

Մեկ որն անցավ, չեկավ նոր որ,
 Ե՛հ, մուկիկը վեր կացավ, վոր
 Փուճ կոկոսի ծակից դուրս դա, —
 Ախր դուրսը գործ կա, տուն կա:

«Լավ եր, կերանք բավականին.
 Հիմի գնանք մենք մեր բանին»:
 Հեշտ ե ասել... ասամ, փորձիր,
 Մի կոկոսի ծակից անցիր...»



Ufuzz

Մոտեցավ վոր ծակից դուրս գա...
Պահո... տեսավ ճամբա չրկա —
Ինքը խոշոր՝ ծակը պուճուր,
Ե՛դ ե, մնաց — բայց մնա ուր...

Հաց ե լինում Մուկիկը,
Վո՞նց լաց չըլնի Մուկիկը...
Տոգրել ե կոկոսում,
Մնացել ե նեղ փոսում:

VI

«Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ. վո՛ւյ, վո՛ւյ,
վո՛ւյ,

Տուճո՞ղ քանդվեց, ա՛յ Պուլպուլ,
Ել չե՞րք կուտեմ ցորնի հատ,
Ճիճու, միջատ, ճանճ, արմատ:



Տուեսս մնաց բըրիշակ,
Ինքս ել եստեղ անփեշակ,
Բան ու գործս թող արի,
Յեկա դառա խեղճ գերի:

Ինչի՞ս եր պետք կոկոսը,
Հավ չե՞ր իմ տուն, իմ փոսը,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ. վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Հի՛մի տեղն ե քեզ, Պո՛ւյվո՛ւյ:

Ախր ի՞նչ բան ունեցիր՝
Գացիր կոկոս ուտեցիր...
Չոռ ուտեցիր՝ լավ չե՞ր, հը՞,
Ցավ ուտեցիր՝ լավ չե՞ր, հը՞...


Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, — զահրուճա՛ր,
Դե լա՛ց, մնա՛ քեզ համար»:



Уфуртuo

Եսպես լացեց Մուկիկը,
 Ենքան լացեց Մուկիկը,
 Հետն ել սովից լղարեց.
 Վոր լղարեց, — բարակեց,
 Մեկ ել, ըհը՛, սուս ու փուս,
 Ծակից նորից չելավ դուրս...

Ե՞ս ինչ եր, տո՞, ես վո՞նց չեղավ,
 Ես ծակիցը վո՞նց դուրս չեկավ.
 Վո՞նց... Այ, նաչի՛ր, — ես քեզ մուկը,
 Ե՛ն կոկոսը, ե՛ն՝ միջուկը:



Տեսա՞ր լավ բան, կեցցես, Պու, պոու,
Տո, ել ի՞նչ «վայ», ել ի՞նչ «վույ-
վույ»...

Տո, քե՛ֆ արա, ոխայ, ոխայ,
Դե, պար արի, տարայ-նի-նայ...

Համ թուշում ե, համ պարում ե,
Համ յերգում ե, համ կանչում ե. —
Չան, քե՛ֆ արա, տարայ-նի-նի. —
Ա՛յ, թե քե՛ֆը ինչպես կըլնի:



Պատ. խմբագիր՝ Եղ. Չոփուրյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Դանչո
Նկարներ՝ Մ. Բաղդասարյանի
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան
Գլավիճի լիազոր Հ — 1103

Հրատ. 3730, Պատվեր 961, Տիրաժ 10000.

Լիտոգրաֆիա Պետհրատի տպարանի,

Յերևան, II Գնդանի, № 4

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.



Դ. ԴԵՄԻՐՉՅԱՆ
ՄՅՍԻՆՈՔ ՍՄԻՍՄԱՆԻ

Գիւ ՏՏՐ Արմենիւ, Երեւան, 1933 .